ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005թ. հուլիսի 11-ի Հ. 1483-Ա ՈՐՈՇՈՒՄԸ «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի Հ. 2385-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

11 հուլիսի 2005 թվականի N 1483-Ա

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի Հ. 2385-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երեւան քաղաքում իրականացվող շինարարության, ինչպես նաեւ լիցքի համար անհրաժեշտ բնահող թափոնները կենտրոնացված տեղափոխելու, մայրաքաղաքի սանիտարական վիճակը եւ բնապահպանական խնդիրները բարելավելու նպատակով.

Երեւանի քաղաքապետի 15.12.2004թ. 2385-Ա որոշմամբ հաստատված Երեւանի քաղաքապետարանի գործավարության կարգի 2.20 ենթակետին կից «ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու և նախագծերի համաձայնեցման ընթացակարգի» սխեմայի ճարտարապետահատակագծային առաջադրանքով կառուցապատողին ներկայացվող պահանջների ցանկը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Նախագծային փաստաթղթերը Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչության համաձայնեցմանը ներկայացվում են «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առեւտրային կազմակերպության հետ կնքված՝ շինարարական աղբի եւ բնահողի լիցքի համար հատկացված համապատասխան աղբավայր տեղափոխելու վերաբերյալ պայմանագրի առկայության դեպքում»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ե. ԶԱԽԱՐՅԱՆ